

[ԺԵ]

1 Ապա յետ այնորիկ ի սահմանակիցս ի Սիւնական աշխարհն ելաներ: 2 Եւ անդ աստուածաւեր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց, որ էր Վաղենակ անուն: 3 Բագում աւզնականութիւն¹ գտեալ ի նմանէ վասն իրացն առաջի արկելոցն, մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց: 4 Եւ ժողովեալ² մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն, առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւղաբարոյ կողմանցն. եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ եւ դայեկաբար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի ևոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել, որոյ անունն կոչէր Անանիաս, այր սուրբ³ եւ երեւելի, հայրաբարոյ⁴ ժառանգաւորաց եկեղեցւոյ: 5 Ապա եւ զերկիրն Սիւնեաց⁵ դասուք վանակաւաց⁶ լնոյր:

6 Յորում ժամանակի պարգելեալ յԱստուծոյ, հասաներ ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն⁷ Սիսականն Վասակ, այր խորհրդական եւ հանճարեղ եւ յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: 7 Բագում ինչ նպաստութիւն ցուցաներ աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ, եւ ծառայեալ ըստ Աւետարանին վայելչութեան⁸, մինչ ի վախճան գիրամայեալսն ի գործ բերեր:

[ԺԶ]

1 Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ հոգ ի մտի արկաներ սիրելին Զրիստոսի եւ վասն բարբարոսական կողմանն: 2 Եւ առնոյր կարգեալ⁹ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն¹⁰ նմա ի Տեառնէ: 3 Գրեր, կարգեր եւ աւրինաւք յարդարեր. եւ առնոյր ընդ իւր զմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ զնայր իջանել¹¹ ի կողմանս Վրաց: 4 Եւ երթեալ յանդիման լիներ թագաւորին, որում¹² անուն էր Բակուր, եւ եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: 5 Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ

1 *de* օզնականութիւնս

2 *b* ժողովել

3 *d չիք* սուրբ

4 *b* հայրաբարոյ

5 *bc* զերկիրն ամենայն Սիւնեաց

6 *bd* վանակաւացն

7 *ce* քաջ

8 *c* զվայելչութեանն

9 *c* զկարգեալ

10 *b* ըստ շնորհելոյ / *acվ* շնորհեցելոյ

11 *c* իջանել

12 *c նախ* գոր, *սպա ուղղ.* գորում